



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

''19'' մայիս 2014 թ.

թիվ 24 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական վիճակագրության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի երրորդ մասի ե) կետով և 14-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով և <<Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է հաստատել.

1. ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում համայնքներում բնակավայրերի, համայնքների տարածքում գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների ու կազմակերպությունների (հիմնարկների) ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 1-ի:
2. ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում համայնքներում բնակավայրերի, համայնքների տարածքում գտնվող գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 2-ի:
3. ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում համայնքներում տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 3-ի:
4. ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակների ընդունման կարգը՝ համաձայն հավելված 4-ի:

Կ Ա Ր Գ

ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ ԳՀՀ) նախապատրաստական հիմնական աշխատանքներից է տնտեսությունների և գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների/հիմնարկների ցուցակների կազմումը:

Տնտեսությունների ցուցակներն անհրաժեշտ են.

1) համայնքների տարածքները հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի սահմանազատելու,

2) ԳՀՀ ընթացքում տնտեսությունների հաշվառման ամբողջականությունն ապահովելու և կրկնակի հաշվառումը բացառելու համար:

2. ՀՀ 2014թ. ԳՀՀ նախապատրաստման և անցկացման, աշխատանքների ժամանակացույցով (*հավանության է արժանացել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2014թ. մայիսի 19-ի թիվ 20-Ա որոշմամբ*) սահմանված ժամկետում կազմվում են **տնտեսությունների ցուցակները՝** ցուցակագրման նպատակով ժամանակավոր աշխատանքներում ներգրավված ցուցակագրողների և համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների կողմից:

3. Ցուցակների կազմման աշխատանքի ողջ պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) մարզային գործակալությունների պետերը

և մարզային գործակալությունների տարածքային բաժինների պատասխանատուները:

4. Տնտեսությունների ցուցակների կազմման, դրանց ընդունման և արդյունքների ամփոփման աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԱՎԾ կողմից հաստատված սույն կարգով, ինչպես նաև ցուցակների կազմման համար մշակված **կարգով և հրահանգով**:

5. Սույն կարգով սահմանվում է տնտեսությունների ցուցակների կազմման, ընդունման, վերահսկման և **ամփոփագրերի կազմման** կարգը:

II ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼԻՍ

6. ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները **համայնքներում տնտեսությունների** ցուցակների կազմման աշխատանքների նախապատրաստման և իրականացման ժամանակահատվածում պարտավոր են տարածքային բաժինների պատասխանատուներին **ապահովել** ցուցակագրողների վկայականներով, անհրաժեշտ քանակությամբ Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1, Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 2, Ձև թիվ 2 - Աղյուսակ 1 և Ձև թիվ 2 - Աղյուսակ 2 ձևաթղթերով:

7. Մարզային գործակալությունների տարածքային բաժինների պատասխանատուները տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքների նախապատրաստման և իրականացման ժամանակահատվածում պարտավոր են.

1) Համայնքների սխեմատիկ հատակագծերի վրա.

ա. ստուգել համայնքի/բնակավայրի սահմանում (սխեմատիկ հատակագծի վրա նախօրոք թաղամասերի ու զանգվածների բաժանված) թաղամասերի (զանգվածների) հերթական համարակալման ճշգրտությունը,

բ. համայնքի տարածքը սահմանազատել **ցուցակագրման տեղամասերի՝** ցուցակագրողի աշխատանքային նորմային համապատասխան,

գ. մեկ ցուցակագրողի աշխատանքային միջին նորման սահմանված է քսանհինգ/տնտեսություն /օր, իսկ աշխատանքներն անհրաժեշտ է կատարել մեկ ամսվա ընթացքում՝ **սկսած 2014 թվականի հուլիսի 1-ից**: Աշխատանքային նորման կարող է տատանվել՝ կախված թաղամասերի (զանգվածների) կառուցապատման բնույթից և դիրքից: Ցուցակագրման տեղամասերը կարող են ընդգրկել ամբողջական թաղամասեր (զանգվածներ) կամ դրանց մի մասը:

Տարբեր թաղամասերի (զանգվածների) մասերից ցուցակագրման տեղամասեր կազմել չի թույլատրվում:

2) Տնտեսությունների ցուցակները կազմելու համար հավաքագրել ցուցակագրողներ և հրահանգավորել նրանց:

3) Ցուցակագրողներին ծանոթացնել իրենց տեղամասերի սահմաններին՝ ճշգրտելով դրանք ցուցակագրման տեղամաս դուրս գալով:

4) Ցուցակագրողներին ապահովել ցուցակագրողի **վկայականներով**, տնտեսությունների ցուցակների կազմման վերաբերյալ հրահանգներով, անհրաժեշտ քանակությամբ Ձև թիվ 2 - Աղյուսակ 1, Ձև թիվ 2- Աղյուսակ 2 ձևաթղթերով, ցուցակագրման տեղամասի սխեմատիկ հատակագծով:

5) Անցկացնել յուրաքանչյուր ցուցակագրողի կողմից կազմված տնտեսությունների ցուցակների՝ լրացման հրահանգով պահանջվող դրույթներին համապատասխանության (հատկապես աշխատանքի առաջին օրերին), ինչպես նաև դրանցում տնտեսությունների ամբողջականության և ճիշտ ընդգրկման ստուգումներ:

6) Ցուցակագրման տեղամասերում շրջագայության ժամանակ ցուցակագրողների կողմից սխեմատիկ հատակագծերում կատարած փոփոխություններն անցկացնել սխեմատիկ հատակագծերի մյուս բոլոր օրինակների վրա:

8. Հրահանգավորել ՀՀ մարզերի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարներին՝ համաձայն **գյուղական համայնքներում բնակավայրերի (այդ թվում՝ դրանց**

տարածքում գտնվող այլ բնակատեղերի) և դրանցում տնային տնտեսությունների ցուցակների կազմման կարգի:

III ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ ԵՎ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ ԿԱԶՄԵԼԻՍ

9. Ցուցակագրողներից և գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարներից տնտեսությունների ցուցակների ընդունումը կատարվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժինների պատասխանատուների կողմից՝ ցուցակագրողի կամ գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների ներկայությամբ:

10. **Տնտեսությունների** ցուցակների ընդունման ժամանակ անհրաժեշտ է ստուգել.

1) **այն համայնքներում, որտեղ իրականացվել են սխեմատիկ հատակագծերով ցուցակագրման աշխատանքներ՝** ցուցակներում թաղամասերի, փողոցների, նրբանցքների, հրապարակների և այլնի, տների ու շինությունների ընդգրկման ամբողջականությունը՝ համեմատելով դրանք սխեմատիկ հատակագծերի հետ, ինչպես նաև յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) և ցուցակագրման տեղամասի հանրագումարների ճշգրտությունը,

2) **գյուղական համայնքների ցուցակներում** բոլոր գյուղական բնակավայրերի ընդգրկման ամբողջականությունը՝ ներառյալ գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ծերանոցների, մանկատների, քրեակատարողական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ գրառումների և դրանց համարակալման ճշգրտությունը:

11. **Տնտեսությունների ցուցակների ընդունման ժամանակ ուշադրություն դարձնել, որ.**

1) **Ձև թիվ 2 - Աղյուսակ 2** ցուցակները պարտադիր կազմված լինեն ըստ առանձին թաղամասերի (զանգվածների): Դրանք փողոցներով կազմած

կարելի է ընդունել միայն բացառիկ դեպքում, երբ համայնքը բաղկացած է մեկ կամ մի քանի զուգահեռ փողոցներից: Համայնքների սահմաններում թաղամասերի (զանգվածների) համարակալումը լինի միասնական հաջորդական համարներով:

2) Ճշգրտված սխեմատիկ հատակագծի վրա յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) համար կազմված լինի առանձին ցուցակ: Թաղամասի (զանգվածի) համարը, ինչպես նաև ցուցակի հասցեամասում դրա սահմանների նկարագրությունը պետք է համընկնի սխեմատիկ հատակագծի հետ:

12. Յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) ցուցակը պետք է համեմատել սխեմատիկ հատակագծի հետ, ցուցակում գրված բոլոր տները (շինությունները) պետք է համապատասխանեն դրանց փաստացի առկայությանը, իսկ գրառման հերթականությունը՝ հատակագծի և տեղանքի վրա դրանց ճիշտ տեղաբաշխմանը: Ցուցակների կազմման ժամանակ պետք է անպայման հաշվի առնել սխեմատիկ հատակագծում կատարված բոլոր փոփոխությունները և ուղղումները:

13. Ցուցակագրողի կողմից հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները սխեմատիկ հատակագծում, ինչպես նաև փողոցների անվանումների ու տների (շինությունների) համարանիշերի անճշտության վերաբերյալ բոլոր դիտողությունները հարկավոր է ճշտել և ուղղումներ մտցնել ցուցակներում ու սխեմատիկ հատակագծի վրա:

14. Ցուցակի յուրաքանչյուր էջում ստուգվում է տվյալների գրառման, տների (շինությունների), տնտեսությունների ամբողջականությունն ու ճշգրտությունն ըստ հասցեների: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել ցուցակներում անկյունային տների (շինությունների) հաշվառմանը, որոնք պետք է գրվեն փողոցներից մեկում՝ այնտեղ, որտեղ տունը (շինությունը) պաշտոնապես նշվում է փոստային բաժանմունքում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային բաժնում:

15. Յուրաքանչյուր տան (շինության) համար պարտադիր ստուգվում է գրառված տնտեսությունների քանակը (երկու և ավել տնտեսությունների առկայության դեպքում, անհրաժեշտ է կատարել հարցում՝ դրանում

համոզվելու համար և անճշտության դեպքում կատարել համապատասխան ուղղումներ):

16. Թաղամասում (զանգվածում) տնտեսությունների ցուցակների ընդունման ժամանակ պետք է ստուգել յուրաքանչյուր ցուցակի հանրագումարների ճշգրտությունը:

17. Թաղամասում (զանգվածում) տնտեսությունների յուրաքանչյուր ցուցակ (Ձև թիվ 2 - Աղյուսակ 2) ստուգելուց հետո ստուգվում է ցուցակագրողի կողմից Ձև թիվ 2 -Աղյուսակ 1-ում դրանց հանրագումարների հաշվման ճշգրտությունը և ամբողջությամբ ցուցակագրման տեղամասի հանրագումարների հաշվարկները:

18. *Գյուղական համայնքների ղեկավարներից գյուղական համայնքների ցուցակներն ընդունելիս հարկավոր է ուշադրություն դարձնել բոլոր գյուղական բնակավայրերի, դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղիների և տնտեսությունների քանակի հաշվառման ամբողջականությանը:*

19. Տնտեսությունների ցուցակների, ըստ յուրաքանչյուր համայնքի, քանակի տվյալների ստուգման (համեմատելով առկա այլ աղբյուրների հետ) արդյունքում համայնքների ցուցակներում տնտեսությունների քանակի սխալ հաշվարկի հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է կազմակերպել կազմված ցուցակների վերստուգում:

20. Ցուցակներն ընդունելուց հետո հաշվարկվում են հանրագումարներն ըստ քաղաքի և գյուղական համայնքների, այնուհետև ամբողջությամբ՝ տարածաշրջանի (նախկին վարչական շրջանի) կտրվածքով:

21. Ցուցակները ստուգելուց և ընդունելուց հետո ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատուները կազմում են ցուցակների տվյալների **ամփոփագրեր** (ամփոփագիր-3, ամփոփագիր-4, ամփոփագիր - 5, ամփոփագիր - 6):

22. ՀՀ ԱՎԾ կողմից սահմանված ժամկետում ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների տարածքային բաժինների պատասխանատուները Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1, Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 2, Ձև թիվ 2- Աղյուսակ 1 և Ձև թիվ 2- Աղյուսակ 2 ձևաթղթերի հիման վրա կազմված **Ձև թիվ 3 ամփոփագիր, Ձև թիվ 4 ամփոփագիր, Ձև թիվ 5**

ամփոփագիր և Ձև թիվ 6 ամփոփագիր ձևաթղթերը ներկայացնում են ՀՀ ԱԿԾ մարզային գործակալություն:

23. «Ձև թիվ 3 ամփոփագիրը (համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ու դրանցում տնտեսությունների և կազմակերպությունների/հիմնարկների)» կազմվում է գյուղական համայնքի աշխատակազմի ղեկավարի քարտուղարների կողմից տրամադրած **Ձև թիվ 1 գյուղական-Աղյուսակ 2** ձևաթղթի տվյալներով:

24. Ձև թիվ 3 ամփոփագրում լրացվում են.

- 1) 1-ին սյունակում՝ համայնքի հերթական համարը,
- 2) «Ա» սյունակում գրվում է տվյալ համայնքի անվանումը,
- 3) 2-րդ սյունակում լրացվում է տվյալ համայնքում բնակավայրերի քանակը, որը պետք է համապատասխանի Ձև թիվ 1 գյուղական-Աղյուսակ 2 ամփոփագրի աղյուսակի 1-ին՝ բնակավայրի հերթական համարը սյունակի վերջինը գրված թվին,
- 4) 3-րդ սյունակում լրացվում է Ձև թիվ 1 գյուղական-Աղյուսակ 2 ամփոփագրի աղյուսակի 4-րդ սյունակի հանրագումարային տվյալը,
- 5) 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակներում լրացվում են Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 2 ամփոփագրի աղյուսակի համապատասխանաբար՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ սյունակների հանրագումարները,
- 6) 7-րդ սյունակում լրացված ցուցանիշը պետք է համապատասխանի Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 2 ամփոփագրի աղյուսակի 8-րդ հերթական համարը սյունակի վերջինը գրված թվին:

25. «Ձև թիվ 4 ամփոփագիրը (համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ու դրանցում տնտեսությունների)» կազմվում է գյուղական համայնքի աշխատակազմի ղեկավարի քարտուղարների կողմից տրամադրած **Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1** ձևաթղթի տվյալներով:

26. Ձև թիվ 4 ամփոփագրում լրացվում են.

- 1) 1-ին սյունակում՝ համայնքի հերթական համարը,

- 2) «Ա» սյունակում գրվում է տվյալ համայնքի անվանումը,
- 3) 2-րդ սյունակում լրացվում է համայնքի հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը, որը պետք է համապատասխանի Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 2 ամփոփագրի 4-րդ սյունակին և Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1 ցուցակի աղյուսակի 1-ին սյունակի վերջինը գրված թվին,
- 4) 3-րդ սյունակում լրացվում է Ձև թիվ 1 գյուղական-Աղյուսակ 1 ցուցակի աղյուսակի 2-րդ սյունակի հանրագումարային տվյալը,
- 5) 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ սյունակներում լրացվում են Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1 ցուցակի աղյուսակի համապատասխանաբար՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակների հանրագումարները,
- 6) 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակում լրացվում են Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1 ցուցակի աղյուսակի համապատասխանաբար՝ 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ սյունակների հանրագումարները,

27. «Ձև թիվ 5 ամփոփագիրը (համայնքներում տնտեսությունների ցուցակների)» կազմվում է ցուցակագրողների կողմից լրացված Ձև թիվ 2 - Աղյուսակ 1 ձևաթղթի տվյալներով: Ամփոփագիրը նախատեսված է այն համայնքների ամփոփ ցուցանիշները ստանալու համար, որտեղ սխեմատիկ հատակագծերի հիման վրա ցուցակագրողների կողմից իրականացվել են տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքներ: Եթե մեկ համայնքը բաժանված է ցուցակագրման մի քանի տեղամասերի, ապա անհրաժեշտ է առանձին տողերով գրել տվյալներ ցուցակագրման յուրաքանչյուր տեղամասի համար, այնուհետև ամփոփել դրանք և մեկ տողով՝ ընդգծելով առանձնացնել համայնքի ընդամենը հանրագումարները, այնուհետև գրել մյուս համայնքինը և այդպես շարունակ: Եթե որևէ համայնքում առկա է ցուցակագրման մեկ տեղամաս, ապա մեկ տողով գրվում է դրա վերաբերյալ համապատասխան տվյալները:

28. **Ձև թիվ 5 ամփոփագրում լրացվում են.**

- 1) 1-ին սյունակում՝ **համայնքի** հերթական համարը,
- 2) «Ա» սյունակում գրվում է տվյալ համայնքի անվանումը,

3) 2-րդ սյունակում լրացվում է տվյալ համայնքի Ձև թիվ 2 - Աղյուսակ 1 ձևաթղթի հասցեամասում գրված ցուցակագրման տեղամասի համապատասխան համարը, մի քանի ցուցակագրման տեղամասերի առկայության դեպքում, համայնքի հերթական համարը սյունակ 1-ում ոչինչ չի լրացվում, «Ա» սյունակում դրվում է «-» կրկնության նշանը, իսկ մնացած սյունակներում գրվում են ցուցակագրման տվյալ տեղամասի համապատասխան տվյալները: Բոլոր տեղամասերի տվյալները գրելուց հետո, անհրաժեշտ է մեկ տողով ամփոփել տվյալ համայնքի համապատասխան սյունակներով տվյալները: Այս դեպքում համապատասխան տողի 2-րդ՝ ցուցակագրման տեղամասի համարը սյունակում դրվում է «X» նշանը: Հաջորդ համայնքի վերաբերյալ տվյալները լրացվում են նույն սկզբունքով՝ աղյուսակի առաջին՝ համայնքի հերթական համարը սյունակում գրելով հերթական համարը:

4) 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունակներում լրացվում են Ձև թիվ 2-Աղյուսակ 1 ձևաթղթի ցուցակագրման տեղամասի համար ամփոփված ընդամենը տողի համապատասխանաբար՝ 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակների տվյալները:

5) 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ սյունակներում լրացվում են Ձև թիվ 2-Աղյուսակ 1 ձևաթղթի ցուցակագրման տեղամասի համար ամփոփված ընդամենը տողի համապատասխանաբար՝ 7-րդ, 8-րդ 9-րդ և 10-րդ սյունակների տվյալները:

6) 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակներում լրացվում են Ձև թիվ 2-Աղյուսակ 1 ձևաթղթի ցուցակագրման տեղամասի համար ամփոփված ընդամենը տողի համապատասխանաբար՝ 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ սյունակների տվյալները:

29. «Ձև թիվ 6 ամփոփագիրը (համայնքներում տնտեսությունների ցուցակների)» կազմվում է ամփոփագիր 4 և ամփոփագիր 5 ձևաթղթերի տվյալներով: Ամփոփագիրը նախատեսված է տարածաշրջանի բոլոր համայնքների ամփոփ ցուցանիշները ստանալու համար: Լրացնելիս, անհրաժեշտ է սկզբում գրել Ձև թիվ 4-ամփոփագրում ներառված համայնքների վերաբերյալ ամփոփ տվյալները, այնուհետև Ձև թիվ 5-

ամփոփագիր ձևաթղթում գրառված համայնքների վերաբերյալ ամփոփ տվյալները: Տարածաշրջանի բոլոր համայնքների վերաբերյալ տվյալները լրացնելուց հետո, ընդամենը տողով ընդգծելով առանձնացվում է ընդամենը տարածաշրջանում անհրաժեշտ սյունակներով հանրագումարային տվյալները:

30. Ձև թիվ 3 ամփոփագիր, Ձև թիվ 4 ամփոփագիր, Ձև թիվ 5-ամփոփագիր և Ձև թիվ 6-ամփոփագիր ձևաթղթերը լրացվում են 2 օրինակից, որից մեկը ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձը հանձնում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությանը, իսկ մյուս օրինակը պահում է իր մոտ:

IV ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ

31. ՀՀ 2014թ. ԳՀՀ նախապատրաստման և անցկացման, աշխատանքների ժամանակացույցով (հավանության է արժանացել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2014թ. մայիսի 19-ի թիվ 20-Ա որոշմամբ) սահմանված ժամկետներում, ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները, ամփոփելով համայնքների տնտեսությունների ցուցակները տարածաշրջանի կտրվածքով, Ձև թիվ 6 - ամփոփագիր ձևաթղթի տվյալների հիման վրա լրացնում են մարզի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, Ձև թիվ 7-ամփոփագիր ձևաթղթում՝ առանձնացնելով յուրաքանչյուր տարածաշրջանի վերաբերյալ տվյալներն առանձին տողով:

32. Ձև թիվ 7 ամփոփագիր ձևաթուղթը լրացվում է 2 օրինակից, որից մեկը ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունը հանձնում է ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչություն, իսկ մյուս օրինակը պահում է իր մոտ:

Ձև թիվ 3-ամփոփագիր

*Կազմվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների
 փարածքային բաժինների կողմից*

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր - 3

**համայնքներում բնակավայրերի, համայնքների տարածքում գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների և
 կազմակերպությունների/հիմնարկների ցուցակների
 (գյուղական համայնքի աշխատակազմի ղեկավարի քարտուղարների կողմից փրամադրած
 Ձև թիվ 1 գյուղական-Աղյուսակ 2 ձևաթղթի փյվյալների)**

Մարզ----- Տարածաշրջան-----

Համայնքի հերթական համարը	Համայնքի անվանումը	Համայնքում բնակավայրերի քանակը	Համայնքի հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	որից՝			Համայնքում գտնվող քրեակատարողական հիմնարկների, գործամաների, մանկատների, ծերերի և հաշնանորանների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գիտափորձարարական ստորաբաժանումների, եկեղեցիների, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսությանը զբաղվող արևարային կազմակերպությունների և /կամ դրանց մասնաճյուղերի քանակը
				հաշվառված և բնակվող	հաշվառված, բայց բացակա	հաշվառում չունեցող, բայց տնամերձ և/կամ գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող	
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.

Համայնքի հերթական համարը	Համայնքի անվանումը	Համայնքում բնակավայրերի քանակը	Համայնքի հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	որից՝			Համայնքում գտնվող քրեակատարողական հիմնարկների, գործարանների, մանկատների, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գիտափորձարարական ստորաբաժանումների, էկոլոգիների, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների և /կամ դրանց մասնաճյուղերի քանակը
				հաշվառված և բնակվող	հաշվառված, բայց բացակա	հաշվառում չունեցող, բայց տնամերձ և/կամ գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող	
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.
Ընդամենը							

Ձև թիվ 4-ամփոփագիր

Կազմվում է ՀՀ ԱՎԾ
 մարզային գործակալությունների
 փարածքային բաժինների կողմից

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր - 4
համայնքներում բնակավայրերի, համայնքների տարածքում գտնվող այլ բնակատեղերի և
դրանցում առկա տնտեսությունների ցուցակների
(գյուղական համայնքի աշխատակազմի ղեկավարի քարտուղարների կողմից տրամադրած
Ձև թիվ 1 գյուղական - Աղյուսակ 1 ձևաթղթի տվյալների)

Մարզ----- Տարածաշրջան-----

Համայնքի հերթական համարը	Համայնքի անվանումը	Համայնքի հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	Համայնքում տնտեսությունների տնամերձ հողեր, ընդամենը, հա	Համայնքում տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության հողեր, հա				Համայնքում տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիներ, գլուխ/հատ			
				վարելա հող	բազմամյա տնկարկ	խոտ-հարք	արոտավայր	խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.

Համայնքի փերթապետի անունը	Համայնքի անվանումը	Համայնքի հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների քանակը	Համայնքում տնտեսությունների տնամերձ հողեր, ընդամենը, հա	Համայնքում տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության հողեր, հա				Համայնքում տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիներ, գլուխ/հատ			
				վարելա հող	բազմամյա տնկարկ	խոտ-հարք	արոտավայր	խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
Ընդամենը											

Ձև թիվ 5-ամփոփագիր

Կազմվում է ՀՀ ԱՎԾ
 մարզային գործակալությունների
 փարածքային բաժինների կողմից

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր - 5
համայնքներում տնտեսությունների ցուցակների
(ցուցակագրողների կողմից լրացված Ձև թիվ 2 - Աղյուսակ 1 ձևաթղթի տվյալների)

Մարզ----- Տարածաշրջան-----

Համայնքի հերթական համարը	Համայնքի անվանումը	Շրջակագրման տեղամասի համարը	Ցուցակագրման տեղամասում										
			հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	բացակա և բնակիչ չէ տնտեսությունների ու մարած ծովսերի քանակը	տնտեսությունների սեփական տնամերձ հողերը, ընդամենը, հա	տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության հողեր, հա				տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիներ, գլուխ/հատ			
						վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք	արոտավայր	խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.

Համայնքի հերթական համարը	Համայնքի անվանումը	Ցուցակագրման տեղամասի համարը	Ցուցակագրման տեղամասում										
			հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	բացակա և բնակիչ չէ տնտեսությունների ու մարած ծովերի քանակը	տնտեսությունների սեփական տնամերձ հողերը, ընդամենը, հա	տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության հողեր, հա				տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիներ, գլուխ/հատ			
						վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք	արոտավայր	խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.
Ընդամենը													

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր - 6
համայնքներում տնտեսությունների ցուցակների
(ամփոփագիր 4 և ամփոփագիր 5 տվյալների հիման վրա)

Մարզ----- Տարածաշրջան-----

Համայնքի հերթական համարը	Համայնքի անվանումը	Համայնքի հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	Համայնքում տնտեսությունների տնամերձ հողեր, ընդամենը, հա	Համայնքում տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության հողեր, հա				Համայնքում տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիներ, գլուխ/հատ			
				վարելա հող	բազմամյա տնկարկ	խոտ-հարք	արոտավայր	խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
Ընդամենը											

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր - 7
(ամփոփագիր 6 –ի տվյալների հիման վրա)

Մարզ-----

Սարածաշրջանի հերթական համարը	Սարածաշրջանի անվանումը	Սարածաշրջանում հաշվառման մեջ ընդգրկված տնտեսությունների հանրագումարը	Սարածաշրջանում տնտեսությունների տնամերձ հողեր, ընդամենը, հա	Սարածաշրջանում տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության հողեր, հա				Սարածաշրջանում տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիներ, գլուխ/հատ			
				վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք	արոտավայր	խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ
1.	Ա.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1											
2											
3											
4											
5											
6											
Ընդամենը											